

տարար երկայն չէ, թիկունքը և կոնքը լայն են, ոտները բաւականին երկայն, ոլորի նշանաւոր երկարութեան պատճառով, թէև (Պանտիւսովի չափերով) աւելի կարճ է քան վրացիներինը՝ զարշապարը մեծ չէ, ձեռքերը բաւականին երկայն են (ըստ Պանտիւսովի աւելի երկայն քան թէ վրացիներինը) և նոցա (ձեռքերի) ընդարձակ ձգանքը երեք սանտիմետրով գերազանցում է հասակի մեծութեան: Գլուխը չափաւոր մեծութեամբ է. միջին մեծութիւնը գլխի հորիզոնական շրջաչափի՝ ըստ Տփարեանովի՝ հաւասար է 574 միլիմետրին, իսկ Պանտիւսովի չափերովը զանազան գաւառներում 547—549 միլ., որ համարեա թէ համապատասխանում է վրաց միջին չափին (547 միլ.) և փոքր ինչ պակաս է Օսերի, Կարաբաղացիների և Սփանեանների և այլն միջին չափից (554—572 մ.): այդ հանգամանքը բացատրւում է յիշեալ ազգութիւնների բարձր հասակով: Գլխի ձեւը—կարճ ու լայն է, չափաւոր ձիգ և նշանաւոր ընդմիջող տրամագծով, ուստի տոկոսաւոր յարաբերութիւնը գլխի մեծագոյն լայնութեան դէպի մեծագոյն երկայնութիւնը, կամ այսպէս ասած՝ գլխի որոշիչը Հայերի մօտ արտայայտւում է խոշոր թուանշանով, այսինքն թէ Հայերը պատկանում են կարճազուլ տիպարին: Տփարեանովիը գտաւ, որ այդ որոշիչը հաւասար է 86¹/₉, Էրկերտ—85¹/₆, Շանտրը—85¹/₃, Պանտիւսով—85¹/₇ (Թիֆլիզցիների) և 86¹/₉ (ուրիշների). այս թուերը ցոյց են տալիս թէ Հայերը վերադասւում են ծայրագոյն բաւականօրէն (կարճազուլ տիպարի) շարքին:

(Նարոնախէլի)

Լ Ե Ջ Ո Ւ Ի

Մ Ի Հ Ը Մ Ե Ս Տ Դ Ը Ս.

Անցեալ տարուայ «Մուրճ»-ի Հոկտեմբեր-Նոյեմբեր համարի մէջ պ. Վանցեանցը ցոյց է տալիս հայոց լեզուի մի թերութիւն և իսկոյն դարմանում է նոյնը: Սա իրաւամբ հիացած է, որ օտար լեզուները իզական գերանուններ ունին (она, sie, elle), և ամի-

ստում է, որ հայերէնը այդպիսի շնորհքից զուրկ է: Եւ որովհետեւ այս հանգամանքը օտար լեզուների ճոխութիւն է կազմում, իսկ հայերէնի—աղքատութիւն, ուստի մեր պարոնը աշխատում է զանեւ դարմանը և . . . գտնում է: Սա շատ սրամիտ նկատողութիւն է անում, թէ օտար լեզուներում իզական գերանունները աւելի երկար են, քան արականները:

արաբ. онъ, ея, il,

իգալ. она, sie, elle.

Յետոյ աւելացնում է, թէ որովհետեւ հայերէնը շատ քիչ կարճ և երկար գերանուններ է գործածում, առանց անոնց մէջ խորութիւն գնելու, ուստի մեծ խոհմանութիւն կը լինի մեր կողմից, որ կարճը յատկացնենք արականին և երկարը՝ իգականին, որով հայերէն լեզուն խիստ կը ճոխանայ: Այսպէս մենք ունինք անխորարար գործածած.

կարճ. նրա, նրանից, նրանով.

էրկար. նորա, նորանից, նորանով:

Ինչո՞ւ ուրեմն այսուհետեւ կարճը արականի զօրութիւն չունենայ, իսկ երկարը— իգականի: Եւ տեսէք, թէ ինչ գեղեցիկ բան դուրս կուգայ: Եթէ ունենանք այսպիսի նախադասութիւն. «Ներայլն ու քոյրը անտառից դուրս եկան, ես հաւանեցի նորա, կամ ես հաւանեցի նրա» — և եթէ երկար ու կարճ գերանունները անխորարար գործածենք, ինչպէս որ հայերէնի մէջ սովորութիւն է դարձել, ո՞վ պէտք է հասկանայ թէ ինչ է նշանակում «նոր» կամ «նրա» գերանունը, արդեօք՝ եղբայր թէ քոյր: Բայց եթէ պ. Վանցեանցի նոր մեթոդով կարճը արական ճանաչուի, իսկ երկարը՝ իգական, այն ժամանակ անշուշտ նախադասութիւնը կը լուսարանուի և մենք անշփոթ կիմանանք իւրաքանչիւր գերանունով միայն իրա համապատասխան անունը, ուրեմն «ես հաւանեցի նրա» կը նշանակէ թէ հաւանեցի էղբայր, իսկ «ես հաւանեցի նորա» — կը նշանակէ թէ հաւանեցի քոյր: — Այս է պ. Վանցեանցի դարմանը:

Մեր պատասխանը հետեւեալն է լեզուն կենդանի կազմուածք է, լեզուին բնահանդ պատուերներ տալ չի կարելի: — Այսքանը հե-

րիք լինի պ. Վանցեանցի առաջարկու թեան պիտանութեան մասին:

Բայց մենք կուզենայինք, որ մեր թարգմանիչները մի ուրիշ բան լաւ ըմբռնէին. թէ պակասութիւնը ոչ թէ հայերէնի մէջ պէտք է փնտաել, այլ մեր թարգմանիչներին անհրաժեշտ մէջ: Երբ որ պ. Վանցեանցը մօտաւորապէս մի այսպիսի թարգմանութիւն է առիտ. «եղբայրն ու քոյրը անառից դուրս եկան էս հոռւանէն շարան» — այսանկ պակասութիւնը ոչ թէ հայերէն լեզուի տկարութիւնն է, այլ կրկնում ենք, թարգմանի անհատութիւնը: Կարգացէք մեր հեղինակները. եթէ պատմութիւն թէ ա) եղբայրն ու քոյրը անառից դուրս եկան, ապա շարունակութեան մէջ երբեք էլ չի ասուի թէ Ե) էս հոռւանէն շարան: Եւ այս այն պատճառով, որ այսպիսի շարունակութիւնը լեզուի հակառակ կապակցութիւնն է. ա ե Ե չեն միաւորվում հայերէնում: ուրեմն իմաստը ուրիշ հազար կերպ պէտք է ձեւացնել, միայն թէ ոչ այդպէս:

Բայց մի թէ միայն հայերէնում այդպէս է: Եթէ անառից դուրս են գալիս ոչ թէ քոյրը եւ եղբայրը, այլ երկու արականներ կամ երկու իգականներ — արդեօք զերմանացին դարձածքը դարձեալ նոյն նախադասութիւններով կը կազմէ: Եթէ ուրեմն զերմանացին այսպէս սկսէ.

ա) «Լուսիննն ու Լիսինը անառից դուրս եկան»: արդեօք դարձեալ մի եւ նոյն կերպով կը շարունակէ.

Ե) «Ես հաւանեցի շարան» (sie), — հարկաւ ոչ: Այս դէպքում զերմանացին ամենայն հմտութեամբ կը խուսափէ ա ե Ե միաւորութիւնից եւ փոխարէնը ուրիշ հազար ու մէկ կանոնաւոր դարձածքով կը ձեւացնէ: —

Երկրորդ՝ մեր թարգմանիչները այս ես լաւ պէտք է ապաւորեն իրանց մտքում թէ հայերէնն էլ ունի իրան իրան յարուստ առաւելութիւններ: Այս ասում ենք ոչ թէ թըթու աղգասիրութիւնից զրգում, այլ այն պարզ միտքը յայտնելով, թէ երկու ծառի պտուղներից մէկը ասան է, միւսը՝ խնձոր:

Մի ուս լեզուարան այսպիսի օրինակ է յիշատակում: «Неужели изъ за страха

передъ волкомъ не строить намъ деревни?» Եթէ այս նախադասութիւնը մեր թարգմանիչները հայերէնով թարգմանենք, մօտաւորապէս կարող էինք այսպէս ասել. «Մէնէ Գայլից լաւ ունէնալ մէն շարան է Գէլ ի հոռւանէն»: Բայց այս 9 երկար բառերում կարծես թէ պակասում է լեզուի ոյժը, ջիւղը, արիւնը, կենդանութիւնը: Մենք զգում ենք, որ խօսքը առակաւոր է. իսկ հայերէնը գէթ առակաւոր խօսք պիտի կարողանայ լաւ արտայայտել:

Բանից դուրս է գալիս, որ ուս հեղինակը այդ նախադասութիւնը թարգմանել է հայերէնից, այն եւ թիֆլիսի բարբառից, թիֆլիսցին աւելի կարճ է ասում.

«Գլից ահա Գլիլ շարան»

(Գայլի ահից գլիլ շարանը).

Հիմա տեսնենք, թէ մեր արհեստական թարգմանականի եւ բուն հայերէնի մէջ ինչ տարբերութիւններ կան: Մէկը ճապաղ է (9 բառ), միւսը ազգու եւ հատու է (4). Թարգմանութիւնը ծանրաբեռնուած է մէն, մէն, պէտք է ունէնալ բառերով, որի կարիքը ժողովրդական լեզուն բնաւ չի զգում: մանաւանդ զարմանալի է այն, որ զերմանուն չի գործածում (մէն). յետոյ նկատելու արժանի է բառերի ընտրութիւնը — մէկն ասում է լաւ, հոռւանցանէլ իսկ միւսը՝ ահա շարան: Բայց աւելի նշանաւոր է լեզուի խիստ անբարեկամ (յատկաբանութիւնը) — մէկը ինքն արամբանական ընթացք ընդունելով ասում է՝ «գայլից վախ ունենալով», միւսը իւր յատուկ օրէնքի համեմատ ասում է՝ «գայլի ահու» իսկ այս վերջին ոճը մեր արամբանական իմաստակութեամբ պէտք է նշանակէ, իրր թէ ահ ունեցողը Գայլը պէտք է լինի, եւ ոչ թէ Գլիլ շարանը. մինչդեռ ժողովրդական լեզուն այդպիսի ջրուտ ոճ գործածելով՝ բնաւ տարակոյս չի յարուցանում: Թէ ինչ է իւր ասածի իսկական իմաստը: Մեր լեզուն լիքն է այսպիսի խիստ անբարեկամ, որ մեր թարգմանութիւնների մէջ (ուրեմն մեր զրականական լեզուի մէջ) բնաւ չեն երևում կամ շատ ակաւոր են երևում: որով մեր լեզուն այլ եւս հայերէն չի հանդիսանում, այլ մի տեսակ չիներէն: Մեր պապերից մնացած գանձը մեր տանը ժանգոտվում

է, չենք գործածում. ուրիշից մուրալով ենք գրադուած: Մենք ձգտում ենք հայուն եւրոպականացնել. այս գովելի է: Բայց մենք չուիայ հագնողի գլխից փափախը վերցնելով՝ անգոր դնում ենք շաւո: այս ծիծաղելի է: —

Ի՞նչ պ. պ. Արեղեանը շատ հիմնաւոր կերպով ցոյց է տուել, թէ այս աշխարհի գերանունները մենք նա գերանունան պէս հոլովելով, մեծամեծ հոմանիւթիւններ ենք առաջացնում մեր լեզուի մէջ. այժմ պ. Վանյանցը խոստանում է ապացուցանել, թէ այդ բանով հոմանիւթիւն երկդիմութիւն չի առաջ գալիս: Եթէ այդ ապացոյցը ապա, նա մեծ ծառայութիւն մատուցած կը լինի: Երանի թէ չմոռանայ խոստումը:

Ս. Ս.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ուր յիշողութեան օրինակներ. — Պատմութեան մէջ յայտնի են արտասովոր յիշողութեան տէր անձանց շատ օրինակներ: — 1801 թուին Վետերնում մի տղայ կար, որ ոչ միայն ծայրէ ի ծայր անգիր գիտէր Աստուածաշունչ սուրբ գիրքը, այլեւ կարող էր մէջերբից, ինչ ուզենային, ասել անսխալ. գիտէր նաեւ զոցա տեղերը, ինչպէս և իւրաքանչիւր գրքի գլուխներն ու տների քանակութիւնը: — Պոնտոսի թագաւոր Միհրդատը, որ մեռել է Ք. ծ. 63 տարի առաջ իւր 80,000 զինուորներից իւրաքանչիւրի անունը գիտէր: — Վեսարն ու Վիրոսը նոյնպէս կարող էին իրենց զօրքի ամէն մի զինուորի անունն ասել: — Սենեկան, որ Ք. ծ. 38 տարի առաջ է մեռել, կարող էր 2000 խօսք նոյն կարգով կրկնել, ինչ կարգով ասէին նորա առաջ: — Լուգո—Հորացիոսը, «միջազգային իրաւունք» կոչուած գիտութեան հիմնադիրը, որ մեռել է 1645 թուին Ռոստոկում՝ ներկայ լինելով Քրանսիայում մի քանի գունտ զինուորների զօրահանգիսին, յիշում էր այն բոլոր զինուորների անունները, որոնք մասնակցում էին հանդիսին: — Լոչակաւոր Լէյքնից փլիստփան, որ ծնուել է 1646 թուին Լայպցիգում և մեռել 1716-ին Լաննովէրում, անգիր գիտէր Վիրգիլիոսը՝ մինչև անգամ խորին ծերութեան հասած ժամանակը: — Անգղիացի Նշանաւոր վարչական գործիչ Զէմս—Փոկսի համար ասում էին, որ եթէ Աստուածաշունչը կորչելու լինի, նրա խօսքերով կարելի կլինի վերականգնել: — Քրանսիացի մատենագիր Ռասինը,

որ մեռել է 1699 թուին Պարիզում, անգիր գիտէր ամբողջ Լատինագէտը. Բէյլը, որ մեռել է 1706-ին, ամբողջ Մոստէնը, Գնոն՝ ամբողջ իրաւարանական օրէնքների ժողովածուն. Մետաստաղիոն, որ մեռել է 1782-ին՝ ամբողջ Հորացիոսը, իսկ Քրանսիացի ճանապարհորդ Վարտեան՝ ամբողջ Նոր Ատակարանը: — Նոյնքան հռչակ ունին և՛ Գետինգէնի ուսուցչապետ Բրենտէլը, որ կարող էր անգիր ասել ամբողջ Եկիականը սկզբից մինչև վերջը և ընդհանրապէս, և Պոնտոսի թագաւոր Միհրդատը, որ բաւական էր միայն երկու անգամ լսէր միւսին ըմբռնական գրուածքը, որպէս զի կարողանար բառացի կրկնել առաջին տեսարանից մինչև վերջինը. Սակայն ամենից աւելի սուր յիշողութիւն ունէր Սան-Ժերմէնը, նա թուեր միտը պահելու մի այնպիսի սուր յիշողութիւն ունէր, որ կարող էր կարգով հազար թիւ միտը պահել, 1574 թուին Վրակովի մէջ Հենրիկոս Գ-րդի պալատում նա մի այնպիսի խաղ խաղաց, որ ընդհանուր զարմանք պատճառեց, նա պատուիրեց հարիւր ձեռք խաղաթուղթ բերել և խնդրեց թագաւորին ու նրան շրջապատողներին, որ խառնեն 3200 թղթերը և կարգով ասեն իրեն: Նա ուշի ուշով գրի առաւ նրանց ասածները և յետոյ՝ առանց մի որեւէ շնչի սխալ անելու, կրկնեց բերանացի բոլորը:

* *

Երկրագնիս ընակիւնի յիշ. — Եւրոպական թերթերից մէկը հետեւեալ հետաքրքիր տեղեկութիւններն է տալիս երկրագնիս ընակիւնների մասին:

Աշխարհիս բոլոր ընակիւնների թիւը 1,200 միլիոն է, մարդ ու կին հաւասար չափով, Նորախոսում են 3064 լեզուով և դաւանում են մինչև 1000 կրօն: Տարեկան մեռնում են 35,214,000 հոգի, իսկ ծնում 36,792,000, այնպէս որ տարին 1 1/2 միլիոնով մարդիկ աւելանում են, Կեանքի միջին հասակը 38 տարուց չի անցնում. համարեա 25 0/0 մեռնում են 17 տարեկան, Ամուսնացած և աշխատաւոր մարդիկ աւելի երկար են ապրում քան ամուրիներն ու անգործները, Բաղաքակրթութեան ազգերի կեանքի միջին տարեկան աւելի երկար է քան վայրենիների:

* *

Սին Գերսոնիսի. — Մօտ օրերս մշտական ընակութիւն հաստատելու համար Բարցելոնա քաղաքն է եկել Մարիա—Լուիզա Ինիգո անունով մի կին, որը յայտնի է «di Punta brava» մականունով: Տեքով այդ կնոջ կարելի է 70 տարեկան համարել, այն ինչ նա միայն 39 տարեկան է: Ինչպէս փայլ է մի Իսպանոհայտ, Մարիա—Լուիզա Ինիգոն Կուրայի Hyo Colorado դաստակերտում քաջութեամբ պաշտպանում էր, երբ ապստամբները Կուինտին Բանդերայի առաջնորդութեամբ յարձակուեցան նրա վրայ: Թշուառ կնոջ աչքի սառը սպանեցին մարդուն ու որդուն: Ապստամբները ստիպում էին